ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **30/հունիսի/2023 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու .....8..... անդամներ:

Բացակա էին՝

Ա. Հովհաննիսյանը, Մ. Հովսեփյանը, Վ. Հայրապետյանը, Մ. Մկրտչյանը, Լ. Մելանյանը, Ֆ. Երանոսյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Գնդեվազ և Կեչուտ գյուղեր վարչական ղեկավարներ Սևակ Մկրտչյանը և Արտակ Բագրատյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյանը աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնակատար (սոցիալական աշխատող) Մ. Մարգարյանը:

<u>Նիստը վարում էր ՁԵՐՄՈՒԿ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարդան Սարգսյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը</u>

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական՝ 2023 թվականի հունիսի 30–ի նիստի հետևյալ օրակարգը.

1.1. Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի N 15-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.3. Ջերմուկ համայնքի 2023 թվականի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ա. Գառնիկյան

1.4. Ջերմուկի համայնքապետարան սեփականությունը հանդիսացող հասարակական նշանակության շենքի տարածքի մի մասը անհատույց օգտագործման տրամադրելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 27-ի N 6-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Ա. Գառնիկյան

1.5. Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 26-ի N 80-Ա որոշումը մասնակի ուժը կորցրած ճանաչելու և համայնքային սեփականության հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.6. Դրամական օգնություն տրամադրելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի պաշտոնակատար Մ. Մարգարյան

1.7. Ջերմուկ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանելու մասին

զեկ. համայնքի ղեկավար Վ. Սարգսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱՋԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝

1. Ջերմուկ համայնքի բյուջեի եկամտային մասի «46-08-00-ճոպանուղու մատուցումից ծառայություններ» և «28-50-00-Ջերմուկի արևային կայանների էլեկտրաէներգիայի մուտքեր» տնտեսագիտական հոդվածները պակասեցնել համապատասխանաբար 20,200,000.0 ՀՀ դրամ և 3,800,000.0 ՀՀ դրամ (ընդամենը՝ 24,000,000.0 ՀՀ դրամ):

2. Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի՝ բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210002-«ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4891-պահուստային միջոցներ» տնտեսագիտական հոդվածը նվազեցնել 19,650,000.0 ՀՀ դրամ, բաժին 04, խումբ 05, դաս 05, ծրագիր 53,210002- «Խողովակաշարային տրանսպորտ» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «4112- պարգևատրումներ, դրամական խրախուսումներ, հատուկ վճարներ», «4212-էներգետիկ ծառայություններ», «4213-կոմունալ ծառայություններ» , «4251-շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում», «4261-գրասենյակային նյութեր և հագուստ» տնտեսագիտական հոդվածները համապատասխանաբար նվազեցնել 1,000,000.0 , 1,500,000.0, 400,000.0, 300,000.0, 500,000.0 ՀՀ դրամ գումարներով, բաժին 06, խումբ 02, դաս 01, ծրագիր 55,210002-«Համայնքների զարգացում» գործառնական նշանակության ծախսերի կատարման «4251-շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական հոդվածը՝ 650,000.0 ՀՀ դրամ գումարով:

3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետով կատարված փոփոխությունները հաշվի առնելով՝ ի գիտություն ընդունել Ջերմուկ համայնքի 2023 թվականի բյուջեն՝ ս/թ հունիսի 30-ի դրությամբ՝

Ընդամենը ՝ *Եկամուտների գծով*- 901,682,987.0 ՀՀ դրամ

Ծախսերի գծով- 901,682,987.0 ՀՀ դրամ

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ն/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 24-ի «Ջերմուկ համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու, Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 2-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 15-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելված 1-ում՝

ա. «Քաղաքացիական աշխատանք կատարողներ-4» տողում «4» թիվը փոխարինել «3» թվով

բ. «Ընդամենը՝ թվաքանակ- 27» տողում «27» թիվը փոխարինել «26» թվով:

2) որոշման հավելված 2-ում՝

ա. 17–րդ տողը հանել

բ. 18-րդ տողի «հաստիքային միավորները» սյունակի «2» թիվը փոխարինել «1» թվով, «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակի «238000» թիվը փոխարինել «119000» թվով

գ. 21-րդ տողի «հաստիքային միավորները» սյունակի «1» թիվը փոխարինել «0,5» թվով, «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակի «187300» թիվը փոխարինել «93650» թվով

դ. 23-րդ տողի «հաստիքային միավորները» սյունակի «1,5» թիվը փոխարինել «1» թվով, «Ընդամենը աշխատավարձ (դրամ)» սյունակի «178500» թիվը փոխարինել «119000» թվով

3) «Քաղաքացիական աշխատանք կատարողներ» բաժինն ամփոփող «Ընդամենը» տողի «4» թիվը փոխարինել «2» թվով, իսկ «687100» թիվը փոխարինել «380800» թվով

4) «Տեխնիկական սպասարկման անձնակազմ» բաժինն ամփոփող «Ընդամենը» տողի «6,5» թիվը փոխարինել «5.5» թվով, իսկ «1046700» թիվը փոխարինել «893550» թվով

5) «Ընդամենը/աշխատակազմ» տողի «26,5» թիվը փոխարինել «23,5» թվով, «5690940» թիվը փոխարինել «5171990» թվով,

6) «Ընդհանուրը» տողի «33,5» թիվը փոխարինել «30,5» թվով, իսկ «8180622» թիվը փոխարինել «7661672.» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի սեպտեմբերի 1-ից:

Կողմ----8------ *Դեմ*----0------ *Ձեռնպահ*----0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԳԱՌՆԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով՝

1. Համաձայնություն տալ 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Ջերմուկ համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների (Ձև 22 և Ձև 22ա):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ՄԻ ՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի N 6-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՍԵՆ ԳԱՌՆԻԿՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի հիման վրա, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝

1. Համաձայնվել Ջերմուկ քաղաքի Վարդանյան փողոցի N 1/1 հասցեում գտնվող Ջերմուկի համայնքապետարանի սեփականությունը հանդիսացող հասարակական նշանակության տարածքի մի մասը՝ 62,7 քմ առանձնացված մակերեսով, հասարակական նշանակությամբ՝ համայնքահեն ծառայություններ մատուցելու նպատակով անհատույց օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը. օգտագործման ժամկետը՝ 10 (տասը) տարի:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Ջերմուկի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 27-ի «Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող Վարդանյան փողոցի N 1/1 հասցեում գտնվող տարածքը մրցույթով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, ամսական

վարձավճարի գինը և պայմանները հաստատելու և Ջերմուկի համայնքի ավագանու 2012 թվականի հուլիսի 31-ի N 28-Ա և 2013 թվականի մայիսի 30-ի N 24-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ----7---------- *Դեմ*----1---------- *Ձեռնպահ*----0----------

Ա. Հովսեփյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 80-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 36-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 26-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները հաստատելու մասին» N 80-Ա որոշումը մասնակի՝ 10-016-0208-0107 և 10-016-0208-0106 կադաստրային ծածկագրերով հողերի մասով (որոշման 1-ին կետի աղյուսակի 3-րդ և 4-րդ տողեր) ճանաչել ուժը կորցրած:

2.Համաձայնություն տալ Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող՝

ա/ համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0,52412 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0208-0106) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 50 000 (հիսուն հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի,

բ/ համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0,37873 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0208-0107) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ

օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, ամսական վարձավճարի մեկնարկային չափը՝ 45 000 (քառասունհինգ հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----7---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----1----
Հովակիմյան Ա.

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՈՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 52-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկի համայնքի 2023 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից 300 000 (երեք հարյուր հազար) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել Ջերմուկ համայնքի բնակիչ Յուրիկ Պարույրի Հակոբյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ա/

Լսեցին
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի սեպտեմբերի 19-ին, ժամը՝ 15.00-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	բացակա
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	բացակա
Մկրտչյան Մարինե Մայիսի	բացակա
Բաբայան Ժիրայր Ժորայի	
Մնացականյան Արկադի Ալբերտի	բացակա
Գևորգյան Մանան Աղվանի	
Վահանյան Վարուժան Կնյազի	
Հովակիմյան Ազատ Հայրիկի	
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	բացակա

Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Վարդան Սարգսյան _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը _____